ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԵԴԱ ՊԱՐՍԱՄՅԱՆ
*ՀՅԹԻ*

# ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ. ՕՍՄԱՆԱՀՊԱՏԱԿ ՀԱՅ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ԿԱԼՎԱԾԱԳՐԵՐԸ[1]

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Հայկական պահանջատիրությունը՝ ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված վնասների եւ կորուստների հատուցման, ինչպես նաեւ դրանց հետեւանքների հաղթահարման, հայերի խախտված իրավունքների վերականգնման նպատակով հանցավոր պետությանը՝ Թուրքիային, հիմնավոր պահանջների ներկայացման ու դրանց բավարարման գործընթացի ամբողջականությունն է։ ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին թուրքական վարչակարգերի՝ Օսմանյան կայսրությունում շարունակաբար իրագործած ցեղասպանության քաղաքականության հետեւանքով հայերին հասցրած հսկայական վնասներն ու կորուստները կարելի է բաժանել հետեւյալ խմբերի՝ ա) մարդկային կորուստներ, բ) հայրենազրկում, գ) մշակութային ժառանգության կորուստներ, դ) նյութական կորուստներ, ե) հոգեբանական բարդույթներ[2]։*

*2015 թ. հունվարի 29-ին ընդունված «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրով» հերթական անգամ ամրագրվեց այն սկզբունքը, որ Հայաստանի Հանրապետությունը հետեւողական է լինելու Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման եւ հատուցման գործընթացներն առաջ տանելու ուղղությամբ[3]։ Ցեղասպա-*

[1] *Կալվածքի սեփականությունը հաստատող գրություն՝ փաստաթուղթ, սեփականության վկայական։*

[2] *Տե՛ս* Ա. Մարուքյան, *Հայոց ցեղասպանության նյութական հետեւանքների հաղթահարման հիմնահարցը, Երեւան, 2015, էջ 3—13։*

[3] *«Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիր», բնօրինակը տե՛ս Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ֆոնդեր, բաժին 57, ֆոնդային համար 886։*

*նության հետեւանքների հաղթահարման հարցում հատկապես կարեւորվեց հատուցման գործընթացի ծավալումը, այդ առումով իրավական պահանջների թղթածրարի պատրաստումը (հուշակագրի 6-րդ կետ)՝ դիտելով այն որպես անհատական, համայնքային եւ համազգային իրավունքների եւ օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ*[4]*։*

*Մասնավորապես նյութական կորուստների հատուցման պահանջն առավել իրատեսական եւ ապացուցելի են դարձնում հայերի՝ մինչեւ մեր օրերը պահպանված երբեմնի ունեցվածքի սեփականության վկայագրերը, որոնց առարկան բռնայուրացրել եւ/կամ ոչնչացրել է հանցավոր պետությունը՝ Թուրքիան, իսկ այդ ունեցվածքի իրական սեփականատերերին սպանել կամ տեղահանել է։*

*Առ այսօր ինչպես հայաստանյան, այնպես եւ Սփյուռքում գործող տարատեսակ հաստատությունների արխիվներում՝ թանգարաններում, գրադարաններում, ինչպես նաեւ անհատ քաղաքացիների պահոցներում առկա են նախկին օսմանահպատակ հայերի մասնավոր եւ համայնքապատկան ունեցվածքի կալվածագրերի հազարավոր օրինակներ, որոնք ցանկագրման եւ ուսումնասիրության կարիք ունեն։ Այսպիսի կարեւոր ձեռնարկ Կիլիկիայի ազգապատկան կալվածքների վերաբերյալ ժամանակին իրականացրել է Սահակ Բ. կաթողիկոսը։ Վերջինիս հրամանով Սսի կաթողիկոսության՝ Անթիլիասում հաստատվելու (1930 թ. հուլիս) առաջին իսկ տարիներին խնամքով հավաքվել եւ ցուցակագրվել են Կիլիկիո ազգապատկան միայն այն կալվածքների վավերագրերը, որոնք Ադանայի առաջնորդարանի եւ կաթողիկոսարանի դիվանատնից փրկվել եւ տարբեր ճանապարհներով հասել են Անթիլիաս*[5]*։ Այդ կալվածագրերը (192 փաստաթուղթ) այսօր պահվում են Կիլիկիո կաթողիկոսության դիվանատանը*[6]*։ Դրանցում ընդհանուր հաշվարկով արձանագրված է 460 կալվածք, որից շուրջ 225 հեկտար հողատարածքով 407 կտոր շինություն եւ 12 000 դյոնում*[7]* *հողատարածքով*

---

[4] *Տե՛ս անդ։*

[5] *Ցուցակը ֆրանսերեն կազմել է Լիբանանի Հայ ազգային առաջնորդարանի դիվանապետ եւ իրավական խորհրդական Զաքարիա Պզտիկյանը։ Ցանկագրումից դուրս են մնացել Ադանայի նահանգի հայ առաքելական եկեղեցիների մեծ մասի, ինչպես նաեւ հայ կաթոլիկ եւ ավետարանչական եկեղեցիներին պատկանող կալվածագրերը, որոնք չեն պահպանվել կամ դեռեւս անհայտ են եւ նույնպես մեծ թիվ են կազմում։ Տե՛ս* Բ. ԵՂԻԱՅԵԱՆ, *Ատանայի հայոց պատմութիւն, Անթիլիաս–Լիբանան,1970, էջ 878—891։*

[6] *Տե՛ս անդ, էջ 878։*

[7] *Չափման միավոր, 1 դյոնումը համարժեք է 160 քառակուսի կանգունի։*

*53 կտոր դաշտագետին (արտ, այգի, մարգագետին եւ այլն)[8]։ Համաձայն կալվածագրերում արձանագրված գույքի գնահատման՝ նշված կալվածքների ընդհանուր արժեքը կազմում է 623 215 օսմանյան ոսկեդրամ[9]։*

*Պահանջատիրության տեսանկյունից այս եւ մյուս կալվածագրերը՝ որպես իրավական փաստաթղթեր, շատ կարեւոր են եւ կարող են հիմք դառնալ Հայոց ցեղասպանության հետեւանքով հայ ժողովրդի կրած նյութական կորուստների դիմաց հնարավոր հատուցումների հարցում։*

*Սույն հոդվածն առաջին անգամ քննության է առնում ցեղասպանությանը զոհ դարձած կամ ցեղասպանությունը վերապրած օսմանահպատակ հայ քաղաքացիների մասնավոր եւ համայնքապատկան (վանական համալիրների, եկեղեցիների) ունեցվածքի վերաբերյալ կալվածագրերը կամ սեփականության վկայականները։ Ուսումնասիրվող թեման համակարգային է՝ փոխկապակցված հարակից բազմաթիվ թեմաներով, որոնք բաց են եւ ուսումնասիրության կարիք ունեն։*

## ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱՎՈՐ ԵՒ ԱԶԳԱՊԱՏԿԱՆ ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ԿԱԼՎԱԾԱԳՐԵՐԸ

*Սույն ոդվածի համար հազարավոր կալվածագրերից հիմք են դարձել միայն մի քանի հարյուր օսմաներեն բնօրինակներ, որոնք պահվում են Հայաստանի ազգային արխիվում[10], Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում[11], ինչպես նաեւ անձնական հավաքածուներում[12]։ Հայաստանի ազգային արխիվում պահվողները մեծ մասամբ վանքապատկան (Մշո Սուրբ Կարապետ վանքի (օսմաներեն՝ Զանգլի), Բայազետի Սուրբ Հովհաննես վանքի (օսմաներեն՝ Ուչքիլիսե) կալվածքների՝ այգու, արտի, մարգագետնի եւ այլնի սեփականությունը հաստատող փաստաթղթեր են[13], որոնք 1915 թ. փրկել եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին է հանձնել Բագրեւանդի (Բայազետի գավառ) առաջնորդա-*

---

[8] *Տե՛ս անդ, էջ 878—880։*

[9] *Տե՛ս անդ։*

[10] *ՀԱԱ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիվան, Ֆ. 57, ց. 2, գ. 2076, գ. 2214—2224։*

[11] *ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բաժին 17 (Ցեղասպանությունը վերապրածների վերաբերյալ անձնական փաստաթղթեր եւ կենսագրական տվյալներ)։*

[12] *Բանասեր, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտաշխատող Միհրան Մինասյանի անձնական հավաքածու։*

[13] *Նմանօրինակ կալվածագրերի մի քանի բնօրինակներ՝ թարգմանություններով, տե՛ս հոդվածի Հավելվածում, պատկերներ՝ 12, 13, 14, 15։*

կան տեղապահ Ներսես ավգ. քհն. Քաջբերունին: Այդ կալվածագրերը 1958 թ. Մատենադարանից մուտք են գործել եւ վերջնական պահպանության հանձնվել Հայաստանի ազգային արխիվին՝ կազմելով «Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիվան» ֆոնդի երկրորդ ցուցակի կարեւոր մասը: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում պահվող կալվածագրերի հիմնական մասը ձեռք է բերվել նվիրատվությունների շնորհիվ: Թանգարանի բացման օրվանից ի վեր Հայոց ցեղասպանությունը վերապրածների կամ զոհերի ժառանգներն իրենց ընտանեկան մասունքները, այդ թվում՝ Օսմանյան կայսրությունում իրենց երբեմնի ունեցվածքի հետ կապված փաստաթղթերը, ի պահ են հանձնել ՀՑԹԻ գիտական ֆոնդերին:

Մեր ձեռքի տակ եղած կալվածագրերի թվագրումն սկսվում է 1872-ից եւ ավարտվում 1913-ով: Դրանք իրենց բնույթով կարելի է բաժանել երկու խմբի. 1) օսմանահպատակ հայ քաղաքացիների մասնավոր ունեցվածքի՝ տան, այգու, արտի, մարգագետնի, ջրաղացի, խանութի, լուսանկարչատան եւ այլ սեփականության վավերագրեր, 2) հայկական համայնքապատկան կալվածքների՝ վանական համալիրներին, եկեղեցիներին պատկանող կալվածագրեր: Այդ վանքերն ու եկեղեցիներն այսօր պարզապես գոյություն չունեն, հողին են հավասարեցված, սակայն կալվածագրերը վկայում են դրանց երբեմնի գոյության եւ հայկական պատկանելության մասին: Եկեղեցապատկան կալվածքները, որպես կանոն, գրանցված են ոչ թե ազգի կամ եկեղեցու, այլ այս կամ այն հոգեւորականի կամ եկեղեցականի անունով, որի մահից հետո տվյալ կալվածքը կարող էր անցնել նրա ժառանգներին[14]:

Կալվածագրերը տրված են կալվածական պաշտոնատան (կալվածական հատուկ վարչության) կողմից եւ կրում են Օսմանյան կայսրության տարբեր սուլթանների անձնական կնիքները (թուղրաները[15])[16]: Բոլոր կալվածագրերն ունեն հերթական համար՝ կարգահամար, նշված են տվյալ կալվածքի՝ մայր տոմարի մեջ արձանագրված լինելու թիվը, տոմարի հերթական համարը եւ էջը[17]: Այս հանգամանքը խիստ

[14] Մշո Սուրբ Կարապետ վանքի որոշ կալվածքներ արձանագրված են եղել լուսարարապետ Հակոբ վրդ. Գրիգորյանի անունով. տե՛ս հոդվածի Հավելվածը, պատկերներ՝ 12, 13:

[15] «Թուղրա»-ն Ստ. Մալխասյանցի բառարանում հանդիպում է տ սկզբնատառով: Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հտ.4, էջ 436:

[16] Տե՛ս հոդվածի Հավելվածը, պատկերներ՝ 1, 3, 4, 6, 7, 8, 9, 12, 13, 14, 15:

[17] Տե՛ս անդ:

կարեւոր է եւ փաստում է այն մասին, որ կալվածքի պատկանելությունն արձանագրված է ոչ միայն սեփականատիրոջը տրված փաստաթղթի բնօրինակում, այլ նաեւ կալվածական հատուկ վարչության (մերօրյա նոտարական գրասենյակների) գրանցամատյաններում կամ տոմարներում:

Կալվածագրերում հստակ նշված են կալվածքի գտնվելու վայրը՝ գավառը, գյուղը կամ քաղաքը, շրջանը, թաղը եւ այլն, տեսակը (տուն, ջրաղաց, արտ, այգի, մարգագետին եւ այլն), մակերեսը (ժամանակի չափման միավորներով՝ կանգուն[18], դյոնում, արտավար[19]), սահմանները (բոլոր կողմերում եղած շինությունների, դրանց սեփականատերերի անունները, ճանապարհները եւ այլն), նախկին (եթե առկա է) եւ ներկա սեփականատերերի անունները, գույքի գնահատման արժեքը, գույքի սեփականատեր դառնալու առիթը (ժառանգ, գնում, աճուրդով ձեռք բերված լինելը կամ ոչ եւ այլն), քաղաքացիական պատկանելությունը (օսմանահպատակ կամ այլ)[20]: Տարբեր ժամանակահատվածներում կալվածագրերի ձեւավորումը տարբեր է եղել: Օրինակ՝ Ի. դարասկզբի կալվածագրերում առկա են նաեւ որոշ մանրամասներ, ինչպես՝ կալվածաթղթի արժեքը, այն լրացնող պաշտոնյայի՝ Թափուի (Նոտարի) քարտուղարգրագրին վճարած տուրքի արժեքը եւ այլն: Կալվածագրերի վերջում պարտադիր դրվում էր կալվածական վարչության կնիքը, որոշ դեպքերում նաեւ՝ մուխթարների կամ թաղապետների, փաստաթուղթը լրացնող քարտուղար-գրագիրների կնիքները:

Հողային կալվածքների (արտ, այգի, պարտեզ, մարգագետին) պարագայում, վերոնշյալ տվյալներից բացի, կալվածագրում պարտադիր նշվում էր, որ սեփականատերը պարտավորվում է տվյալ կալվածքի դիմաց օրենքով սահմանված տասանորդի տարեկան տուրքը վճարել պետությանը:

Այսպիսով՝ ներկայացված կալվածագրերն Օսմանյան Թուրքիայի կողմից իր իսկ երկրի հայ քաղաքացիներին տրված սեփականությունը հաստատող փաստաթղթեր են, որոնք օսմանահպատակ հայերի երբեմնի ունեցվածքի լավագույն վկայություններն են:

---

[18] 1 կանգունը 68 սմ է:

[19] Օրավար՝ զույգ եզով մեկ օրվա վարելահող:

[20] Տե՛ս Հավելված, պատկերներ 12-ի եւ 13-ի թարգմանությունները:

## ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵԶՐԿՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ ՄԻՆՉԵՒ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Չնայած սեփականության բնօրինակ փաստաթղթերի առկայությանը՝ ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին հատկապես հայերի պատմական տարածքներում՝ Արեւմտյան Հայաստանում եւ Կիլիկիայում, հայերի ունեզրկման, հայկական հողերի գրավման՝ օսմանյան իշխանությունների քաղաքականությունը մեծ չափերի էր հասել: Դեռ մինչեւ ցեղասպանությունն արեւմտահայության ունեզրկման, ապօրինի հարկահանության, հայերի պատմական հողերում մահմեդականների վերաբնակեցման, հայերի կալվածքներն ապօրինաբար անժառանգ ճանաչելու եւ այլ կամայականությունների հետեւանքով արեւմտահայերին պատկանող անշարժ գույքը կառավարությունն օտարում եւ տրամադրում էր մահմեդականներին: Այս պարագայում անգամ կալվածագրերն էին կեղծվում, ստեղծվում էին դրանց երկրորդ-երրորդ օրինակները՝ այլ բովանդակությամբ:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումն ու սահմանադրական նոր կարգերի հաստատումը հույս ներշնչեցին հայ մտավորական շրջանակներին հարցի լուծումը գտնելու Օսմանյան խորհրդարանում: Խնդիրն առավել համակարգված եւ փաստարկված ներկայացնելու նպատակով 1909 թ. նոյեմբերին Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանում ստեղծվում է Հողային հարցի հանձնաժողով (անդամներ՝ Ռ. Փափազյան, Ա. Հալաճյան, Ղ. Պեզազյան, օսմանյան խորհրդարանի պատգամավորներ՝ Գ. Տեր-Կարապետյան (Մշո Գեղամ), Ն. Տաղավարյան): Ըստ իր ուսումնասիրության՝ հանձնաժողովը կազմում եւ 1910 թ. մարտի 26-ին պատրիարք Եղիշե արք. Դուրյանին է ներկայացնում տեղեկագիր, որտեղ 14 կետով ներկայացված են հայերի մասնավոր եւ ազգապատկան հողերի գրավման ձեւերը[21]: Հատկանշական են մասնավորապես թափու-ի (կալվածաթղթի) առկայության դեպքում գրավյալ հողերը (կետ 8-րդ), որոնց տուրքերն արդարության վերականգնման եւ կալվածքի վերադարձի հույսով շարունակում էին վճարել հայերը, եւ կեղծ թափու-ներով գրավյալ հողերը (կետ 10-րդ), որոնց տուրքերը վճարում էին բռնագրա-

[21] Տե՛ս Տեղեկագիր հողային գրաւմանց յանձնաժողովոյ, պաշտօնական հրատարակութիւնք Ազգային Պատրիարքարանի, տետր Ա., Կ. Պոլիս, 1910, էջ 1—2:

վողները[22]։ Այսինքն՝ երկու դեպքում էլ բացահայտ անտեսվում էին կալվածքի իրական սեփականատերերի իրավունքները. մի դեպքում՝ մերժելով սեփականության հաստատող փաստաթղթի գոյությունը, մյուս դեպքում՝ կեղծելով կալվածաթուղթը՝ ստեղծվում էր դրա երկրորդ օրինակը՝ այլ սեփականատիրոջ անունով։

Հատկանշական է, որ միեւնույն ժամանակահատվածում օսմանյան գործող քրեական իրավունքը (Ottoman Penal Code) մանրամասն դրույթներ է սահմանել իր քաղաքացիների ունեցվածքի ոչնչացման, որեւէ վնաս հասցնելու եւ/կամ թալանի եւ բռնագրավման դեպքում (բաժին 12, հոդվածներ 244—253) պատասխանատվության ենթարկելու, ինչպես նաեւ փոխհատուցում տրամադրելու (հոդվածներ 10, 11) առումով[23]։ Սակայն բազմաթիվ են դեպքերը, երբ անգամ բնօրինակ փաստաթղթերի առկայությունը չէր օգնում վերականգնել արդարությունը։ Համաձայն հողային հանձնաժողովի կազմած տեղեկագրի՝ 1910 թ. դրությամբ կայսրության 32 գավառներում ավելի քան 7000 կալվածքի բռնագրավման մասնավոր դեպք է արձանագրված, իսկ ազգապատկան կալվածքներից՝ 16 գերեզմանատան, 13 վանքի, 27 եկեղեցու եւ 81 մեծ ու փոքր ագարակի[24]։ Ազգապատկան կալվածքներից հատկանշական է Սսի մայրավանքի սեփականությունը հանդիսացող Փայաս-Լիմոնլըք լեռնադաշտի բռնագրավման դեպքը, երբ չնայած կալվածագրի առկայությանը՝ գրանցված Սսի Միքայել կաթողիկոսի անունով, դատարանը վճիռը բեկանել է ի վնաս վանքի՝ լեռնադաշտը հանձնելով պետության տնօրինմանը[25]։

Որոշ դեպքերում դատարանը, չկարողանալով բացահայտ անտեսել սեփականության փաստաթղթի առկայությունը, թեեւ որոշումները հայերի օգտին էր կայացնում, սակայն դրանք, որպես կանոն, կիրառություն չէին ունենում. դրանց գործադրման համար դատարանը հետեւողական չէր լինում՝ չսահմանելով որեւէ ժամկետ կամ տույժ[26]։ Այսպես՝ Մշո Սուրբ

---

[22] Տե՛ս անդ։

[23] Տե՛ս The Imperial Ottoman Penal Code: A Translation from the Turkish Text, with Latest Additions and Amendments, Together with Annotations and Explanatory Commentaries Upon the Text and Containing an Appendix Dealing with the Special Amendments in Force in Cyprus and the Judicial Decisions of the Cyprus Courts, H. Milford, Oxford University Press, 1913, էջ 12, 192—198։

[24] Տե՛ս Տեղեկագիր հողային գրասմանց յանձնաժողովոյ, էջ 3։

[25] Տե՛ս անդ, էջ 10—11։

[26] Տե՛ս ՀԱԱ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիվան, Ֆ. 57, ց. 2, գ. 2216, թ. 8, գ. 2217, թ. 15—16։

Կարապետ վանքի հոգաբարձուների փոխանորդ Վարդան վարդապետի՝ Մուշի նախնական դատարանի նախագահին ուղղված խնդրագրից տեղեկանում ենք, որ վանքի սեփականությունը հանդիսացող հողերն անօրինական կերպով յուրացրել են Վերին Քիրվաս գյուղի քուրդ բնակիչները, սակայն դրանք վանքին հանձնելու՝ դատարանի որոշումը չի կիրառվել[27]։ Վերին Քիրվաս գյուղի քրդերի՝ Մշո Սուրբ Կարապետ վանքի հողերն ապօրինաբար յուրացնելու եւ այնտեղ 21 տուն, մզկիթ եւ գոմ կառուցելու, ինչպես նաեւ վանքի օգտին Մուշի նախնական դատարանի վճիռը չկիրառելու մասին տեղեկանում ենք նաեւ վանքի միաբանների՝ պատկան մարմիններին ուղղված բազմաթիվ խնդրագրերից[28]։ Միաբանները հարցը պարբերաբար բարձրացրել են նաեւ Կ. Պոլսի կալվածական վարչության նախարարության առջեւ, սակայն այն այդպես էլ որեւէ լուծում չի ստացել։ Կ. Պոլսի հայոց պատրիարք Հարություն Վեհապետյանն այս գործով դիմել է նաեւ Վանի նահանգի վերաքննիչ դատարանի ընդհանուր դատախազին՝ նշելով, որ դատական վճիռը չի իրագործվում, եւ քրդերը շարունակում են մնալ վանքի հողերում[29]։ Հայկական վանքերի, գյուղերի վրա հարձակումներն ու հողային զավթումները հաճախ ուղեկցվել են սպանություններով, կողոպուտով, որոնք նույնպես անպատիժ են մնացել[30]։

Հայերի ունեզրկման թուրքական քաղաքականության մեկ այլ դրսեւորում էր նրանց մասնավոր եւ համայնքապատկան կալվածքները մահլուլ (*անժառանգ*) ճանաչելը[31]։ Այս պարագայում նույնպես բացահայտ անտեսվել կամ մերժվել են հայերի սեփականությունը հաստատող վկայականները։ Մասնավոր ունեցվածքից հիմնականում անժառանգ էին ճանաչվում այն հայերի կալվածքները, որոնք տարբեր պատճառներով արտագաղթել էին, այնուհետեւ վերադարձել եւ անգամ կալվածագրի առկայության դեպքում իրենց հողերի տերը չէին այլեւս[32]։ Այս եւ հողային խնդրի հետ կապված բազմաթիվ այլ հարցեր հայ մտավորական-քաղաքական շրջանակները բազմիցս բարձրացրել են տար-

27 Տե՛ս անդ, Ֆ. 57, ց. 2, գ. 2217, թ. 16։

28 Տե՛ս անդ, Ֆ. 57, ց. 2, գ. 2216, թ. 8, գ. 2217, թ. 15—16։

29 Տե՛ս անդ։

30 Տե՛ս անդ։

31 Տե՛ս տեղեկագրի 7-րդ եւ 12-րդ կետերը։ Տեղեկագիր հողային գրաւմանց յանձնաժողովոյ, էջ 1—2։

32 Տե՛ս անդ։

*բեր ատյաններում, մասնավորապես՝ օսմանյան խորհրդարանում*[33]*։ 1912 թ. հունիսի 30-ին խորհրդարանում հողային հարցի քննարկման ժամանակ Գրիգոր Զոհրապը*[34]*, անդրադառնալով խնդրի իրավական կողմին, մատնանշում է կայսրության հողային օրենսգրքի 72-րդ հոդվածը, որի համաձայն՝ եթե որեւէ գյուղի կամ քաղաքի բնակչություն ամբողջովին կամ մասամբ լքել է իր հայենիքը, ապա այդ հողերն անտեր չեն համարվում*[35]*։*

*Հողային հարցի լուծմանն է միտված Գ. Զոհրապի՝ 1911 թ. նոյեմբերի 28-ին մեծ վեզիր Քյուչուկ Մեհմեդ Սաիդին ուղղված ընդարձակ խնդրագիրը՝ «Խաղաղության եւ կարգ ու կանոնի հաստատումը» խորագրով*[36]*։ Ելնելով պատգամավորական իրավունքից՝ Գ. Զոհրապը մանրամասն փաստարկված ներկայացնում է արեւմտահայության ծանր կացությունը, տեղական իշխանությունների, դատարանների կամայականություններն ու գեղծումները, այդ թվում՝ մասնավոր եւ ազգապատկան գույքի ու կալվածքների հափշտակումները*[37]*։*

*Հայկական վանքերի, եկեղեցիների ու դպրոցների եկամուտը հանդիսացող կալվածքներն անժառանգ ճանաչելու գործում կարեւոր դերակատարություն ուներ* Վաքըֆային *տեսչությունը*[38]*՝ արտոնված կառավարության կողմից։ Այն կեղծ արձանագրությունների կազմման միջոցով պարբերաբար դատական գործեր է հարուցել հիշյալ կալվածքների անժառանգության խնդրով՝ միեւնույն ժամանակ խափանելով այդ*

---

[33] *Մանրամասն տե՛ս* Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, *Հողային հարցի լուծման ուղիներն ըստ Օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների (1910—1912 թթ.), ՊԲՀ, թ. 2, Երեւան, 2021, էջ 195—206։*

[34] Գրիգոր Զոհրապ *(1861—1915) — գրող, հրապարակախոս, փաստաբան-իրավագետ, հասարակական-քաղաքական գործիչ, 1908—1915 թթ. Օսմանյան խորհրդարանի պատգամավոր։*

[35] *Տե՛ս անդ, էջ 205։*

[36] *Խնդրագիրը հայերեն թարգմանությամբ առաջին անգամ լույս է տեսել «Ազատամարտ» օրաթերթի 1911 թ. դեկտեմբերի 21—22 (776—777) համարներում։ Տե՛ս «Պ. Զօհրապի յիշատակագիրը ուղղուած վարչապետ Սաիտ փաշային», Ազատամարտ, Կ. Պօլիս, 21 դեկտեմբեր, թիւ 776, 22 դեկտեմբեր, թիւ 777, 1911, էջ 1։ Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի արխիվում պահվող թուրքերեն խնդրագրի՝ Ա. Փափազյանի ամբողջական թարգմանությունը տե՛ս նաեւ «Վավերագրական նյութեր արեւմտահայերի մասին», «Հայագիտությունը արտասահմանում», գիտա-ինֆորմացիոն բյուլետեն, Գ. մատենաշար, թ. 2 (56), Երեւան 1983, էջ 5—12։*

[37] *Տե՛ս անդ։*

[38] *Հիմնվելով շարիաթի սկզբունքների վրա՝ տնօրինում էր կրոնապատկան եւ սեփականատիրական այլ կալվածքներ։*

հաստատությունների գործունեությունը[39]։ Հայկական ազգապատկան կալվածքներն անժառանգ ճանաչվել ու յուրացվել են հիմնականում շարիաթական դատարանների[40] կայացրած վճիռներով՝ մեկ-երկու սուտ վկայությունների հիման վրա[41]։ Արեւմտյան Հայաստանի տարածքում մեծ չափերի հասնող այդօրինակ յուրացումները, անկասկած, Վաքըֆային տեսչության կամ դատարանների ինքնագործունեության հետեւանք չէին, այլ իրականացվում էին կառավարության անմիջական թողտվությամբ եւ ցուցումներով։ Այս առումով հատկանշական է վերոնշյալ խնդրագրում Գ. Զոհրապի՝ որպես իրավաբանի հիշեցումը մեծ վեզիրին առ այն, որ շարիաթական դատարանը միայն կառավարության ցուցումով կարող է հողային դատեր լսել[42]։ Վերոնշյալ խնդրի վերաբերյալ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը նույնպես դիմումներ է հղել կառավարությանը, որոնց ի պատասխան ստացվել է հետեւյալ անհիմն պատճառաբանությունը՝ «օրենքի դրվածքը այդպես է»[43]։ Խնդրագրի «Խաղաղության եւ կարգ ու կանոնի հաստատումը» խորագրի ներքո Զոհրապը կետ առ կետ արեւմտահայությանը վերաբերող խնդիրների լուծման հավանական տարբերակներ է առաջարկում։ Մասնավորապես ազգային կալվածքների հարցում նա պնդում է, որ հայկական դպրոցներին, եկեղեցիներին ու վանքերին կից հողերի եւ կալվածքների անժառանգության վերաբերյալ հարցապնդումներն արգելվեն, իսկ նիզամիե դատարաններին հանձնված դատերի առնչությամբ կառավարական խորհուրդը որոշում կայացնի շարիաթական դատարանների կայացրած վճիռները չեղյալ համարելու մասին[44]։ Բանն այն է, որ շարիաթական դատարանների միջոցով հողերի յուրացումներն այնպիսի մեծ չափերի էին հասել, որ կառավարությունը որոշում կայացրեց հողային բողոքները վճռել նիզամիե դատարաններում։ Սակայն կառավարության այդ «զիջումը» եւս որեւէ արդյունք չտվեց, քանի որ «օրինական» դարձած այդ յուրացումները պետական

---

[39] Տե՛ս «Վավերագրական նյութեր արեւմտահայերի մասին....», էջ 8։

[40] Օսմանյան կայսրությունում գոյություն ուներ երկու տիպի դատարան՝ շարիաթական եւ նիզամական։ Շարիաթական դատարանը գործում էր զուտ Ղուրանի դոգմաների հիման վրա, եւ նրա իրավասությանն էին ենթակա անշարժ գույքի, ամուսնության, ժառանգության, դավանանքի վերաբերյալ հարցերը, իսկ նիզամականը գործում էր պետության կողմից ընդունված քաղաքացիական օրենքների՝ «դյուսթուր»-ի հիման վրա։

[41] Տե՛ս անդ։

[42] Տե՛ս անդ։

[43] Տե՛ս անդ։

[44] Տե՛ս անդ, էջ 11։

*քաղաքականության մաս էին կազմում եւ այս կամ այն դատական մարմնի կամայական որոշումները չէին։ Բացի հողազրկման օրինական դարձած եղանակներից՝ իշխանությունները քրիստոնյա եկեղեցիներին ու վանքերին կարգադրում էին հողերը վաճառել կամ օգտագործման տալ միայն մուսուլմաններին[45]։ Հայերի հողերի բռնագրավումով պետությունը մի քանի խնդիր էր լուծում. 1) բարելավվում էր թուրքերի եւ մյուս մուսուլմանների տնտեսական վիճակը, 2) լուծվում էր պարբերաբար կայսրություն ներթափանցող մուսուլման ներգաղթողների «մուհաջիրների[46]» բնակեցման հարցը, 3) նպաստում էր հայերի արտագաղթին՝ այդպիսով որոշակիորեն փոխելով երկրի ժողովրդագրական պատկերը[47]։*

*Տեղահանված կամ սպանված հայության մասնավոր եւ ազգապատկան ունեցվածքը յուրացնելու քաղաքականությունը հետագայում արտացոլվեց դրան ուղղված որոշումներում։*

## ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ՅՈՒՐԱՑՈՒՄԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԵՒ ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ

*Ցեղասպանության իրագործմամբ բնաջնջվելուց եւ հայրենազրկվելուց բացի՝ հայ ժողովուրդը ենթարկվեց զանգվածային ունեզրկման ու թալանի։ Ցեղասպանության ընթացքում եւ դրանից հետո թուրքական*

---

[45] *Տե՛ս ՀԱԱ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիվան, Ֆ. 57, ց. 2, գ. 2216, թ. 8, գ. 2217, թ. 15–16։*

[46] *Դեռեւս ԺԹ. դարի կեսերից սուլթան Աբդուլ Համիդ Բ.-ի՝ Օսմանյան կայսրության, մասնավորապես Արեւմտյան Հայաստանի բնակչության ազգային կազմը «մուհաջիրներով»՝ մուսուլման վերաբնակիչներով փոխելու ժողովրդագրական քաղաքականությունն ուներ նաեւ ընդգծված հակահայկական ուղղվածություն։ Դրանով սուլթանական կառավարությունը ձգտում էր Արեւմտյան Հայաստանում բարձրացնել մահմեդականների թվաքանակը՝ միաժամանակ խրախուսելով հայերի արտագաղթը։ 1913 թ.՝ Բալկանյան պատերազմների ավարտից հետո, հիմնականում Բալկաններից դեպի կայսրություն սկսվեց «մուհաջիրների» նոր հոսք, որոնց մի մասը հաստատվեց Արեւմտյան Հայաստանում։ Այս մասին մանրամասն տե՛ս* А. Авакян, Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX — первая четверть XX вв.), Ереван, 2001, *էջ 134–136, 222–223։*

[47] *Հայաթափելով Արեւմտյան Հայաստանը, Կիլիկիան եւ հայաբնակ մյուս վայրերը՝ օսմանյան իշխանությունները հետապնդում էին մի կարեւոր նպատակ. ազատվել հայ ազգաբնակչությունից կամ այնպես նվազեցնել հայերի թվաքանակը, որ նրանք որեւէ վայրում մեծամասնություն չկազմեին։ Այսպես իշխանությունները ձեռք էին բերում պետության գոյության համար ամենակարեւոր գործոնը՝ տարածություն, հող, որը բնակեցված կլիներ մեծ մասամբ թուրքերով։ Մանրամասն տե՛ս* Ա. Ոսկանյան, *Հայերի հողազրկումը որպես Օսմանյան կայսրության պետական քաղաքականություն, «Դրոշակ» ամսաթերթ, ապրիլ, 2021, էջ 12–14։*

*իշխանություններն ու մուսուլման բնակչությունը հետեւողականորեն բռնազավթեցին եւ յուրացրեցին ոչ միայն սպանված կամ տեղահանված հայերի ողջ գույքն ու ունեցվածքը, այլեւ հայ ժողովրդի համայնքապատկան/ազգապատկան կալվածքները*[48]*։ Այդ նպատակով ընդունվեցին մի շարք օրենքներ եւ հրամանագրեր՝ հայտնի որպես «Լքյալ գույքի մասին օրենքներ», որոնցով «օրինականացվեց» հայերի ունեցվածքի բռնագրավումը*[49]*։ «Լքյալ գույքի մասին օրենքը», ինչպես նաեւ «Տեղահանության մասին ժամանակավոր օրենքը» ընդունվում են հետադարձ՝ նպատակ ունենալով արդարացնել օսմանյան կառավարության անօրինական գործողությունները՝ կանխելու համար հետագայում հնարավոր հատուցումների պահանջը։ Սկզբում թուրքական կառավարությունը հայերին հավաստիացնում էր, որ միջոցներ է ձեռնարկում պաշտպանելու նրանց սեփականության իրավունքը՝ համարժեք փոխհատուցելու նպատակով։ Սակայն իրականում հայերի գույքը վաճառվում էր, աճուրդի դրվում եւ/կամ փոխանցվում ուրիշներին. կառավարությունը շարունակում էր հավաստիացնել, որ տնօրինում է այդ գույքն իր սկզբնական սեփականատերերի անունից*[50]*։*

*Առաջին աշխարհամարտում Օսմանյան Թուրքիայի պարտությունից հետո նոր ժամանակավոր կառավարությունը չեղյալ է հայտարարում տեղահանության եւ «լքյալ գույքի» մասին օրենքները՝ որպես Օսմանյան սահմանադրության խախտում։ Ավելին. Ստամբուլի կառավարությունը որոշում է կայացնում տերերին վերադարձնել լուծարված գույքը կամ դրան համարժեք գումարը*[51]*։ Սկզբնական սեփականատիրոջ մահացած լինելու եւ ժառանգներ չլինելու դեպքում գումարը պետք է տրվեր հայկական կազմակերպություններին։ Լուծարքի հանձնաժողովների հավաքած գումարները նույնպես պետք է հետ վերադարձվեին*[52]*։*

---

[48] *Տե՛ս* Ս. Պարսամյան, *Հայկական մշակութային արժեքների յուրացման եւ ոչնչացման երիտթուրքական քաղաքականությունը (1915—1918 թթ.), «Ցեղասպանագիտական հանդես» 6 (1), Երեւան, 2018, էջ 71—104։*

[49] *Տե՛ս* Լ. Վարդան, *Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը, Պէյրութ, 1970, էջ 93—100, 153—155.* V. Dadrian, The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, Oxford, Berghahn books, 1995, *էջ 222—225.* Uğur Ümit Üngör and Mehmet Polatel, Confiscation and Destruction: The Young Turk Seizure of Armenian Property, London, 2011, *էջ 41—49,* Ա. Հովհաննիսյան, *Հայերի ունեզրկման գործընթացն Օսմանյան կայսրությունում եւ քեմալական Թուրքիայում, Երեւան, 2016, էջ 15—40։*

[50] *Տե՛ս* Uğur Ümit Üngör and Mehmet Polatel, *նշ. աշխ., էջ 48—49։*

[51] *Տե՛ս անդ։*

[52] *Տե՛ս անդ։*

*Սեւրի պայմանագրի 144-րդ հոդվածով թուրքական կառավարությունը նույնպես ընդունում էր «լքյալ գույքի» վերաբերյալ 1915 թ. օրենքի եւ դրա լրացուցիչ դրույթների անօրինականությունը՝ անվավեր եւ ուժը կորցրած ճանաչելով դրանք ինչպես անցյալում, այնպես էլ ապագայում[53]: Նույն՝ 144-րդ հոդվածով թուրքական կառավարությունը պարտավորվում էր հնարավորության սահմաններում նպաստել, որ իրենց օջախները վերադառնան եւ իրենց գործերը վերսկսեն օսմանյան այլազգի այն քաղաքացիները, որոնք 1914 թ. հունվարի 1-ից հետո գաղթել են գազանությունների հանդեպ ունեցած վախից դրդված կամ արտաքսվել բռնադատման որեւէ այլ եղանակով: Կառավարությունը պարտավորվում էր նաեւ միջոցներ ձեռք առնել, որ վերոնշյալ քաղաքացիներին հնարավորինս շուտ վերադարձվի իրենց կամ իրենց համայնքներին պատկանող շարժական ու անշարժ գույքը, որը կարող է գտնվել որոնումների միջոցով, անկախ այն բանից, թե ում ձեռքում է գտնվում[54]:*

*Գործընթացը, սակայն, շուտով կասեցվում է Անկարայի ազգայնական նոր կառավարության կողմից: 1920 թ. հունիսի 7-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովն ընդունում է օրենք, որով անվավեր է ճանաչում Ստամբուլի կառավարության քաղաքական եւ առեւտրային պայմանագրերը՝ այդպիսով օրինականացնելով հայերի ունեցվածքի լուծարումը[55]:*

*1923 թ. հուլիսի 24-ի Լոզանի պայմանագրով չեղյալ են հայտարարվում վերականգնման եւ փոխհատուցման վերաբերյալ բոլոր դրույթները, որոնք առկա էին միջազգային նախկին պայմանագրերում, որից հետո լքյալ գույքի խնդիրը նոր փուլ է մտնում: Քեմալական կառավարությունն ընդունում է մի շարք օրենքներ եւ հրամանագրեր՝ միտված հայկական ունեցվածքի բռնագրավմանն ու օրինականացմանը: Դրանցից մեկի համաձայն՝ 1925 թ. սեպտեմբերի 30-ից անհայտ կորածների հանքերի նվիրատվությունները, աճուրդներն ու իրավունքները չեղյալ են հայտարարվում՝ համարվելով պետության սեփականություն[56]: Համաձայն 1926 թ.*

---

[53] *Տես* "The Peace Treaty of Sèvres" *[*http://www.hri.org/docs/sevres/, *դիտվել է՝ 07.10.2021], պայմանագրի որոշ հոդվածների, այդ թվում եւ 144-րդ հոդվածի ամբողջական հայերեն թարգմանությունը տես «Հայաստանը միջազգային դիվանագիտության եւ սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923)», խմբագր.՝ պրոֆ. Ջ. Կիրակոսյանի, Երեւան, 1972, էջ 672—683:*

[54] *Տես նույն:*

[55] *Տես* Uğur Ümit Üngör and Mehmet Polatel, *նշ. աշխ., էջ 49:*

[56] *Տես նույն, էջ 55:*

*հունիսի 13-ին Անկարայի կառավարության ընդունած նոր օրենքի՝ վերադարձի ենթակա չէր մինչեւ Լոզանի պայմանագրի գործադրության թվականը (1924 թ. օգոստոսի 6-ը) առգրավված գույքը: Վերականգնման էր ենթակա միայն այն գույքը, որն առգրավվել էր նշված ժամկետից հետո, սակայն միայն այն դեպքերում, երբ պետությունը տեղյակ չի եղել տվյալ գույքի գոյության մասին[57]: Որոշման մեջ այնուհետեւ պարզաբանվել է, որ գույքը վերադարձվելու է գույքատիրոջ կամ նրա ժառանգի ներկայանալու դեպքում, իսկ եթե այն ոչ տեր ունի, ոչ էլ՝ ժառանգ, անցնելու է պետությանը[58]: Այս որոշումը, սակայն, որեւէ հարց «լքյալ գույքն» իրենց տերերին կամ համայնքներին վերադարձնելու առումով չէր լուծում, քանի որ գավառներն ամբողջովին հայաթափված էին, իսկ տեղահանված հայերի մուտքը Թուրքիա՝ արգելված[59]: 1926 թ. մայիսի 31-ի օրենքով հայերի «լքյալ» անշարժ գույքից տրվում է այն թուրք ընտանիքներին, որոնց անդամներն սպանվել էին հայ վրիժառուների կողմից կամ Ստամբուլի դատավարությունների հետեւանքով[60]:*

*«Լքյալ գույքի մասին օրենքները» վերացվում են միայն 73 տարի անց՝ 1986 թ. հունիսի 11-ին, ինչը, սակայն, չի նշանակում, որ լուծարման գործընթացը դադարել է[61]: Հողային գրանցամատյանի (ռեգիստրի) եւ հարկամատյանի (կադաստրի) գլխավոր տնօրինության՝ 2001 թ. հունիսի 29-ին հրապարակած շրջաբերականով բոլոր «լքյալ գույքերը» փոխանցվում են պետությանը: Բացի այդ՝ անհնար է դառնում որեւէ մեկին տրամադրել սեփականության վկայական, տեղեկատվություն կամ փաստաթուղթ[62]:*

*Այսպիսով՝ օսմանահպատակ հայերի մասնավոր եւ ազգապատկան ունեցվածքի յուրացման գործընթացն ունի խոր արմատներ. այս քաղաքականությունը կապող օղակ է թուրքական բոլոր վարչակարգերի միջեւ*

---

[57] *Տե՛ս «Ընդարձակ տարեցոյց Ս. Փ. Ազգային Հիւանդանոցի», է. տարի, Կ. Պոլիս, 1931, էջ 88, ինչպես նաեւ՝* Sh. Toriguian, The Armenian Question and International law, 2nd edition, California, University of La Verne Press, 1988, *էջ 90,* Ю. Барсегов, Геноцид армян: Преступление по международному праву, *էջ 200:*

[58] *«Ընդարձակ տարեցոյց Ս. Փ. Ազգային Հիւանդանոցի», է. տարի, Կ. Պոլիս, 1931, էջ 88:*

[59] *Տե՛ս* E. G. Mears, M. L. Bristol, Modern Turkey: A Politico-Economic Interpretation, 1908–1923, New York, 1924, *էջ 63:*

[60] *Տե՛ս* Uğur Ümit Üngör and Mehmet Polatel, *նշ. աշխ., էջ 56:*

[61] *Տե՛ս* H. Tigranyan, E. Gzoyan, ECtHR Retroactive Jurisdiction and the Possibility of Compensations for the Armenian Properties Confiscated During and After the Armenian Genocide: A Brief Analysis, “International Journal of Armenian Genocide Studies”, *հտ. 5, թ. 1, 2020, էջ 99:*

[62] *Տե՛ս անդ:*

*եւ շարունակվում է մինչեւ մեր օրերը։ Հայոց ցեղասպանության ընթացքում եւ դրանից հետո առավել ակնհայտ դարձավ Օսմանյան կայսրության, այնուհետեւ Թուրքիայի Հանրապետության կողմից իրականացվող համակարգված գործողությունների շղթան՝ ուղղված հայերի ունեցվածքի բռնագրավմանն ու օրինականացմանը, ինչպես նաեւ հնարավոր հատուցումը կանխարգելելուն։ Սակայն ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավունքը ճանաչում է անհատի՝ սեփականության, սեփականությունն իր հայեցողությամբ օգտագործելու եւ տնօրինելու, ժառանգելու եւ օտարման դեպքում համարժեք փոխհատուցում ստանալու իրավունքը[63]։ Վերը ներկայացված կալվածագրերը՝ որպես Օսմանյան կայսրության հայ քաղաքացիների՝ մասնավոր եւ ազգապատկան երբեմնի ունեցվածքի փաստացի վկայություններ, կարող են հիմք դառնալ Հայոց ցեղասպանության հետեւանքով հայ ժողովրդի կրած նյութական կորուստների դիմաց հնարավոր հատուցումների հարցում։*

## ԱՄՓՈՓՈՒՄ

*Սույն հոդվածն առաջին անգամ քննության է առնում ցեղասպանությանը զոհ դարձած կամ ցեղասպանությունը վերապրած օսմանահպատակ հայ քաղաքացիների մասնավոր եւ համայնքապատկան (վանական համալիրների, եկեղեցիների) ունեցվածքի վերաբերյալ կալվածագրերը կամ սեփականության վկայականները։*

*Հայոց ցեղասպանության հետեւանքների հաղթահարման հարցում կարեւորվում է հատկապես հատուցման գործընթացի ծավալումը, այդ առումով իրավական պահանջների թղթածրարի պատրաստումը։ Մասնավորապես նյութական կորուստների հատուցման պահանջն առավել իրատեսական եւ ապացուցելի են դարձնում մինչեւ մեր օրերը պահպանված՝ հայերի երբեմնի ունեցվածքի սեփականության վկայագրերը, որոնց առարկան բռնայուրացվել եւ/կամ ոչնչացվել է հանցավոր պետության՝ Թուրքիայի կողմից, իսկ այդ ունեցվածքի իրական սեփականատերերը՝ սպանվել կամ տեղահանվել։ Առ այսօր ինչպես հայաստանյան, այնպես էլ Սփյուռքում գործող տարատեսակ հաստատությունների արխիվներում՝*

*[63] Տե՛ս, օրինակ, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր», հոդված 17. «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա», «Արձանագրություն 1», հոդված 1. «ՀՀ Սահմանադրություն», հոդված 8 եւ այլն։*

*թանգարաններում, գրադարաններում, ինչպես նաեւ անհատ քաղաքացիների մոտ պահպանվում են նախկին օսմանահպատակ հայերի մասնավոր եւ համայնքապատկան ունեցվածքի կալվածագրերի հազարավոր օրինակներ, որոնք ցանկագրման եւ ուսումնասիրության կարիք ունեն։*

## ՀԱՎԵԼՎԱԾ




*Պատկեր 1.* Դորթյոլի (Չորք-Մարզպան, քաղաք Ադանայի նահանգում) Վերի թաղի թաղական խորհրդի անդամ Պողոս Թըղըլյանին պատկանող այգու կալվածաթուղթը (օսմաներեն, բնօրինակի լուսապատճենը)՝ Մուհամմեդ Ե. Ռեշադ սուլթանի թուղրայով, Դյորթյոլ, 28 դեկտեմբերի, 1910 թ. — 21 հունվարի, 1911 թ.: *Միհրան Մինասյանի հավաքածու*



*Պատկեր 2.* Պողոս Թըղըլյանը կնոջ հետ, Դյորթյոլ, 1900-ականներ: Պողոս Թըղըլյանը 1915 թ. մայիսին հասել է Հալեպ, անդամակցել ախոռականների հարցերով զբաղվող՝ տեղում ստեղծված հանձնախմբին: 1916 թ. փետրվարին եղել է Մաարրայի ախոռավայրում, որից հետո անհետ կորել է:
*Միհրան Մինասյանի հավաքածու*


سند خاقانی

*Պատկեր 3.* Զեյթունցիներ Ասատուր, Գեւորգ, Մարտիրոս եւ Փանոս [Անդրեասյան] եղբայրներին պատկանող չաղացի կալվածագիրը (օսմաներեն, բնօրինակի լուսապատճենը)՝ Մուհամմեդ Ե. Ռեշադ սուլթանի թուղրայով, Զեյթուն, 2 նոյեմբերի, 1910 թ.:
*Միհրան Մինասյանի հավաքածու*


سند خاقانى

*Պատկեր 4.* Այնթապցի Հովհաննես Հովհաննեսյան-Հալլաճյան, այնուհետեւ Միհրան Հովհաննեսյան-Հալլաճյան եղբայրներին պատկանող «Հալլաճեան» լուսանկարչատան կալվածագիրը (օսմաներեն, բնօրինակի լուսապատճենը)՝ Աբդուլ Համիդ սուլթանի թուղրայով, Այնթապ, 23 ապրիլի, 1906 թ.:
*Միհրան Մինասյանի հավաքածու*




*Պատկեր 5.* Այնթապի «Հալլաճեան» լուսանկարչատան տարբերանշանը



*Պատկեր 6.* Պետական կալվածաթուղթ՝ Ադանա բաղաքում գտնվող 300 կանգուն տարածքով կալվածքի (ձեթ պատրաստելու մամլիչ, մթերանոց եւ սենյակներ)՝ օսմանահպատակ Գրիգոր աղայի որդի Միքայելի կնոջը՝ Սրբուհուն եւ նրա զավակներին (Տիգրան, Հայկազուն, Երանուհի, Լուսածին) պատկանելու մասին, 14 փետրվարի, 1913 թ.[64]: Փաստաթղթի վերին կենտրոնական մասում առկա է Մուհամմեդ Ե. Ռեշադ սուլթանի թուղրան:
*Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ*

[64] *Կալվածագրի ներքեւի ձախ հատվածում նշված 1321 (օսմ. մալի տարեթվով՝ 1903 թ.) թիվը վրիպակ է, պետք է լինի 1331 (օսմ. մալի տարեթվով՝ 1913 թ.), քանի որ փաստաթուղթը կրում է Մուհամմեդ Ե. Ռեշադ (1909—1918) սուլթանի թուղրան:*


حلب ولايتى
دفتر خاقانى
٤٩٧٢٧

*Պատկեր 7.* Պետական կալվածաթուղթ՝ Հալեպ նահանգի Այնթապ քաղաքի արվարձանում գտնվող 1150 ղուրուշ արժողությամբ այգու՝ օսմանահպատակ Ալանանի Պոյուկ Գեւորգին պատկանելու մասին: Տրված է՝ 14 սեպտեմբերի, 1903 թ.,
14 սեպտեմբերի — 13 հոկտեմբերի, 1903 թ., կարգաթիվ 7:
*Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ*




*Պատկեր 8.* Պետական կալվածաթուղթ՝ Կեսարիա գավառի, Կեսարիա գավառակի, Էսքի Շեհիր շրջանում գտնվող այգու (մակերես՝ 5 հին դյոնում, 1 դյոնումը համարժեք է 160 քառակուսի կանգունի) կեսն օսմանահպատակ Մայիսյան հաճի Կարապետին պատկանելու մասին: Փաստաթղթի վերին կենտրոնական մասում առկա է Աբդուլ Համիդ սուլթանի թուղրան:
Տրված է՝ 30 դեկտեմբերի, 1895 թ., 13 նոյեմբերի — 12 դեկտեմբերի, 1894 թ., կարգաթիվ 152:
*Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ*



*Պատկեր 9.* Պետական կալվածաթուղթ՝ Կեսարիա գավառի Դեւելու գավառակի Ֆեննեսե գյուղի Դեւելուի լեռան մոտ գտնվող շուրջ քառորդ դյոնում (1 դյոնումը համարժեք է 160 քառակուսի կանգունի) տարածքով այգու՝ ավելի քան տասը տարի Եղիայի դուստր Մարիամի սեփականությունը լինելու մասին: Փաստաթղթի վերին կենտրոնական մասում առկա է Աբդուլ Ազիզ սուլթանի թուղրան: Տրված է՝ 20 դեկտեմբերի, 1873 թ., 13 հուլիսի — 12 օգոստոսի 1872 թ., կարգաթիվ 186:
*Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ*



*Պատկեր 10.* Մշո Սուրբ Կարապետ (Գլակավանք, Ե.–ԺԹ. դդ.) վանքը՝ հարավարեւմտյան կողմից, 1905 թ.:
*Լուսանկարը՝ Բոդիլ Կատարինե Բյոռնի:*
*Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ*



*Պատկեր 11.* Մշո Սուրբ Կարապետ վանքի ավերակները, 1972 թ.:
*Լուսանկարը՝ Արմեն Հախնազարյանի*



*Պատկեր 12.* Մշո Սուրբ Կարապետ վանքի (օսմաներեն՝ Զանգլի) սեփականություն հանդիսացող 1400 ղուրուշ արժողությամբ 28 արտավար արտի մուրհակը՝ լուսարարապետ Հակոբ վարդապետ Գրիգորյանի անունով, 16 հուլիսի, 1872 թ.: Փաստաթղթի վերին կենտրոնական մասում առկա է Աբդուլ Ազիզ սուլթանի թուղրան:
*Հայաստանի ազգային արխիվ*

| Կարգահամար<br>13 | Ամս. մատյան փետր. 96 ֆնն.<br>Թաղապետություն |
|---|---|

| | |
|---|---|
| Գավառը՝ Մուշ, Գավառակը՝ Մուշ, Գյուղախաղաքը՝ ----, Գյուղը՝ Զանգլի Կանք | |
| Ծանոթ. շրջանը՝ ----, Թաղը՝ ----, Փողոցը՝ ----, Վայրը՝ Երկար գութանվար | |
| Տեսակը՝ | Արտ |
| Որակը՝ | Պետական հող |
| Սահմանը՝ | Անցքի ճանապարհը, արտ, արոտավայր, նույնպես |
| Քանակը՝ | 28 արտավար |
| Հատկաց. տուրք | ---- |
| Նախորդ տերը | ---- |
| Մուրհակի տրվելու պատճառը | (Հազգը Գարար.) օրինական տիրապետում |
| Սեփականատերը | Լուսարարապետ Հակոբ վարդապետ Գրիգորյան |
| Արժեքը | 1400 |
| Փոխարենը | “ |
| Վերոգրյալ հազար չորս հարյուր դահեկան արժեքով քսանութ արտավար արտը, Կալվածական վարչությունում լուսարարապետ Հակոբ վարդապետի անունով է արձանագրված: Շերիի [շարիաթ] համաձայն՝ ամեն տարի տասանորդը վճարելու համար սեփականությունը հաստատող սույն մուրհակը հիշյալ անձին է տրվում[65]:<br><br>11 նեմազյուլ էվվել 1289 թ. Կալվածական<br>(իսլամական հիջրայի թվական) վարչություն<br><br>(կնիք) | |

*Պատկեր 12-ի թարգմանությունը*
Արդուլ Ազիզի թուղրան
Կալվածագիր[66]

[65] *Օսմաներեն բնագրից թարգմանությունը՝ բանասեր, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի գիտաշխատող Միհրան Մինասյանի:*
[66] *ՀԱԱ, Ֆ. 57, ց. 2, գ. 2221, թ. 2:*



*Պատկեր 13.* Մշո Սուրբ Կարապետ վանքի (օսմաներեն՝ Չանգլի) սեփականություն հանդիսացող 800 ղուրուշ արժողությամբ 16 արտավար մարգագետնի կալվածագիրը՝ լուսարարապետ Հակոբ վարդապետ Գրիգորյանի անունով, 16 հուլիսի, 1872 թ.: Փաստաթղթի վերին կենտրոնական մասում առկա է Աբդուլ Ազիզ սուլթանի թուղրան: *Հայաստանի ազգային արխիվ*

| | |
|---|---|
| Կարգահամար<br>51 | Մատյան թվական փետր.<br>1296 |

| | |
|---|---|
| Գավառը՝ Մուշ | |
| Գյուղը՝ Ջանգլի Վանք, վայրը՝ արտ | |
| Տեսակը՝ | Մարգագետին |
| Որակը՝ | Պետական հող |
| Սահմանները՝ | Ճանապարհ, ձոր, աղբյուր, բլուր |
| Քանակը՝ | 16 արտավար |
| Մուրհակի տրվելու պատճառը | (Հազգը զարար.) օրինական տիրապետում |
| Կալվածատեր | Լուսարարապետ Հակոբ վարդապետ Գրիգորյան |
| Արժեքը | 800 |
| Վերոգրյալ ութ հարյուր ղահեկան արժեք ունեցող տասնվեց արտավար մարգագետինը Կալվածական վարչությունում Հակոբ վարդապետի անունով է արձանագրված։ Շերիի [շարիաթ] համաձայն՝ ամեն տարի տասանորդը վճարելու համար սեփականությունը հաստատող սույն կալվածագիրը հիշյալ անձին է տրվում[67]։<br><br>11 ճեմազյուլ էվվել 1289 թ. Կալվածական (իսլամական հիջրայի թվական) վարչություն<br><br>(կնիք) | |

*Պատկեր 13-ի թարգմանությունը*
Սուլթան Աբդուլ Համիդի թուղրան
Կալվածագիր[68]

[67] *Օսմաներեն բնագրից թարգմանությունը՝ Միհրան Մինասյանի։*
[68] *ՀԱԱ, Ֆ. 57, ց. 2, գ. 2217, թ. 4։*



*Պատկեր 14.* Բայազետ գավառի Ղարաքիլիսե գավառակի Սուրբ Հովհաննես վանքի (օսմաներեն՝ Ուչքիլիսե) սեփականություն հանդիսացող 1500 ղուրուշ արժողությամբ մոտ 50 արտավար մարգագետնի կալվածագիրը՝ Անանի որդի Գեւորգի (Ճիրճիս) անունով, 29 օգոստոսի, 1876 թ.: Փաստաթղթի վերին կենտրոնական մասում առկա է Մուրադ Ե. սուլթանի թուղրան։
*Հայաստանի ազգային արխիվ*

Կայսերական դրոշմի ներքո տրվելու պատճառն այն է, որ կայսերական ընդհանուր կալվածական դիվանին ուղարկված եւ ներքոհամարները գրված պաշտոնաթղթի համաձայն՝ Բայազետ գավառի, Ղարաքիլիսե գավառակի, Ուչքիլիսե վանքի գյուղի վարի լճի մոտ գտնվող հազար հինգ հարյուր դուրուշ արժողությամբ մոտ հիսուն արտավար մարգագետինը, որի չորս սահմաններն են՝ լիճ, առու եւ ժայռ, տասը տարի շարունակ, առանց կալվածաթղթի եւ առանց արգելքի, Անանի որդի Ծիրճիսի տրամադրության տակ է գտնվել: Հիշյալը, յուրաքանչյուր տարի պետության պատկանող օրինական տասանորդը վճարելով, սեփականության իրավունք է ստացել նշված կալվածքի նկատմամբ, ինչի համար նրան տրվեց սեփականությունը հաստատող սույն կալվածաթուղթը[69]:

9 Շաբանի 1293 թ.
(իսլամական հիջրայի թվական)

Կարգահամար 18
Կայսերական ընդհանուր (կնիք)
կալվածական դիվան*ի*

*(կնիք)*

Ամսաառմար Հուլիս 1291 թ.

*Պատկեր 14-ի թարգմանությունը*
Սուլթան Մուրադ Ե.-ի թուղրան
Կայսերական հող Կալվածաթուղթ[70]

[69] *Օսմաներեն բնագրից թարգմանությունը՝ Միհրան Մինասյանի:*
[70] *ՀԱԱ, Ֆ. 57, ց. 2, գ. 2224, թ. 71:*




*Պատկեր 15.* Բայազետի Սուրբ Հովհաննես վանքի (օսմաներեն՝ Ուչքիլիսե) սեփականություն հանդիսացող 1200 ղուրուշ արժողությամբ 60 արտավար մարգագետնի եւ լճի կալվածագիրը, 14 հուլիսի, 1875 թ.[71]:
*Հայաստանի ազգային արխիվ*

[71] *ՀԱԱ, Ֆ. 57, ց. 2, գ. 2224, թ. 6:*



*Պատկեր 16.* Բագավանի Սուրբ Հովհաննես վանքի (Ուչքիլիսե) եկեղեցին (631—639 թթ.) հարավից եւ արեւմուտքից, 1911 թ.:
*Լուսանկարը՝ Հովսեփ Օրբելու*



*Պատկեր 17.* Բագավանի Սուրբ Հովհաննես վանքի (Ուչքիլիսե) եկեղեցու տեղանքը 1940-ականների վերջի հիմնահատակ ավերումից հետո, 2008 թ.:
*Լուսանկարը՝ Սամվել Կարապետյանի*

## РЕЗЮМЕ

В статье впервые рассматриваются акты или свидетельства на частную и общественную собственность (монастырские комплексы, церкви) армянских граждан Османской империи, которые стали жертвами геноцида и/или пережили геноцид.

В преодолении последствий Геноцида армян особое значение имеет развитие репарационных процессов, в частности подготовка документов правовых требований. Таким образом возможные требования о возмещении материального ущерба могут быть более реалистичными и доказуемыми за счет свидетельств о праве собственности на бывшее имущество армян, которое было экспроприировано и/или уничтожено, а подлинные владельцы этого имущества были убиты или департированы. На сегодняшний день в архивах различных учреждений, музеев, библиотек, а также у частных лиц хранятся тысячи копий документов на частную и общинную собственность бывших османских армян, которые необходимо зарегистрировать и изучить.

## SUMMARY

This article for the first time examines the ownership certificates of the private and community property (monastic complexes, churches, etc.) of Ottoman Armenian citizens—victims and/or survivors of the Armenian Genocide.

In overcoming the consequences of the Armenian Genocide, the development of the reparation process is especially important, and a particular accent should be put on the preparation of documents of legal claims. In particular, the possible claims for compensation for material losses can be more realistic and provable due to the ownership certificates of expropriated and/or destroyed property of killed and/or displaced Armenians. To date, thousands of copies of private and communal property documents of former Ottoman Armenians are preserved in the archives of various institutions, museums, libraries, as well as among private citizens, which need to be registered and studied.